

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

_____ մարտի 2017թ.

N ____- Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով անկախ աուդիտոր «Հայաուդիտ» ՍՊԸ-ի ուսումնասիրության արդյունքները և եզրակացությունը, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետին, 82-րդ հոդվածին համապատասխան՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն NN 1 - 5 հատվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Տեղեկանք-հիմնավորում)

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 82-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածներով ամրագրված դրույթները, որի հիմքում ընկած է հավաստիությունը և հստակությունը:

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 77,331,108.2 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 75,704,536.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 102.2%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված (ճշտված) 75,694,536.0 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 77,312,741.5 հազար դրամ՝ ապահովելով 102.1% կատարողական:

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի փաստացի հավաքագրված ընդհանուր եկամուտները ավել են 2015 թվականի փաստացի ցուցանիշից 769,487.9 հազար դրամով: 2016 թվականի ճշտված բյուջեով սեփական եկամուտները ծրագրվել են 19,661,021.8 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 19,746,063.1 հազար դրամ կամ 100.43%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է նաև 2015 թվականի համապատասխան ցուցանիշից 688,910.4 հազար դրամով կամ 3.6%-ով:

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 78,481,116.5 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 100.2%-ը: Ընդ որում, 2016 թվականի փաստացի կատարված ծախսերի ծավալը ավել է 2015 թվականի փաստացի կատարողականից 1,402,679.0 հազար դրամով: Ծրագրված ցուցանիշների նկատմամբ գերակատարումներ առկա են պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման հետ կապված որոշ վարկային ծրագրերի գծով, իսկ մնացած ծրագրերի գծով տարբերությունները

հիմնականում պայմանավորված են գնումների գործընթացում առաջացած խնայողություններով:

Հարկ է նշել, որ 2016 թվականի բյուջեի ծրագրված 2,565,218.1 հազար դրամ պակասուրդի դիմաց բյուջեն փաստացի կատարվել է 1,150.007.8 հազար դրամ պակասուրդով: Միաժամանակ բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Ստորև ներկայացվում է Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:

Եկամուտներ

Երևանի 2016 թվականի բյուջեի փաստացի եկամուտների 18.3%-ը ձևավորվել է հարկային եկամուտների և տուրքերի հաշվին, որից 6.5%-ը՝ գույքային հարկեր անշարժ գույքից, 7.5%-ը՝ գույքային հարկեր այլ գույքից, 4.0%-ը՝ ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներից, 0.5%-ը՝ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի եկամուտների 24.9%-ը ձևավորվել է պաշտոնական դրամաշնորհների հաշվին, 56.7%-ը՝ այլ եկամուտների հաշվին, որից 0.2%-ը՝ շահաբաժիններից, 1.2%-ը՝ գույքի վարձակալության դիմաց եկամուտներից, 49.7%-ը՝ համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից և 4.6%-ը՝ վարչական գանձումներից:

Հարկեր և տուրքեր.

Հարկային եկամուտների և տուրքերի մասով 2016 թվականի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 14,220,259.0 հազար դրամ՝ ծրագրված (ճշտված) 14,223,118.9 հազար դրամի նկատմամբ՝ 2015 թվականի 13,698,677.7 հազար դրամ փաստացի կատարողականից 521,581.3 հազար դրամով կամ 3.8%-ով ավել, այդ թվում՝

- գույքահարկի գծով փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 10,121,823.8 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 10,029,895.3 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 100.9%, որը 2015 թվականի փաստացի ցուցանիշից ավել է 91,928.5 հազար դրամով:

-հողի հարկի մասով մուտքերը կազմել են 632,634.4 հազար դրամ, նախատեսված 651,357.1 հազար դրամի դիմաց, որը սակայն ավել է 2015 թվականի ցուցանիշից 8,689.6 հազար դրամով:

Թեև հարկային եկամուտների գծով 2016 թվականին ծրագրվել էր առավելագույն գանձման ցուցանիշ, իսկ ընթացիկ տարվա հարկերի գանձման վերջնաժամկետով պայմանավորված առկա էին օբյեկտիվ խնդիրներ, պետք է նշել, որ նախորդ տարի ձեռնարկված միջոցառումները հնարավորություն են տվել ապահովելու ինչպես ծրագրային ցուցանիշների կատարումը, այնպես էլ գերակատարումը:

-տեղական տուրքերի գծով փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 3,089,519.6 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 3,154,866.5 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 97.9%:

Տեղական տուրքերի կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար փաստացի հավաքագրված տուրքը, կազմելով 1,250,603.8 հազար դրամ և ապահովելով 40.5% տեսակարար կշիռ տեղական տուրքերի կազմում: Ոգելից խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տուրքերի մասով մուտքերը կազմել են 353,033.6 հազար դրամ ծրագրված 358,461.0 հազար դրամի նկատմամբ: Ավտոկայանատեղի համար տուրքերի գծով ծրագրված 920,000.0 հազար դրամ ցուցանիշի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 858,518.5 հազար դրամ, որից 49,481.0 հազար դրամը՝ ծառայողական ավտոկայանատեղի կազմակերպման համար: Թեև տեղական տուրքերի որոշ տեսակների մասով առկա են ծրագրված ցուցանիշների թերակատարումներ, սակայն պետք է հաշվի առնել, որ ցուցանիշները ծրագրվում են կանխատեսելիության սկզբունքով, իսկ գանձումն իրականացվում է հաշվետու տարում փաստացի հաշվառման տվյալներով, որն էլ իրականացվել է ամբողջությամբ:

-պետական տուրքերի գծով փաստացի հավաքագրվել է 376,281.1 հազար դրամ՝ ծրագրված 387,000.0 հազար դրամի դիմաց, որից.

- քաղաքացիական կացության ակտեր գրանցելու հետ կապված համապատասխան գործարքներից՝ 73,394.4 հազար դրամ,
- նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայությունների հետ կապված համապատասխան գործարքներից՝ 302,886.7 հազար դրամ:

Պաշտոնական դրամաշնորհներ.

Պաշտոնական դրամաշնորհների մասով մուտքերը կազմել են 19,268,468.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 19,268,816.5 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100.0%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 13,430,355.1 հազար դրամ, իսկ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներից (սուբվենցիաներից) մուտքերը 5,838,113.5 հազար դրամ:

Այլ եկամուտներ.

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեով այլ եկամուտների գծով նախատեսված էր 42,212,600.6 հազար դրամի մուտքեր, որի դիմաց փաստացի հավաքագրվել է 43,842,380.6 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 103.9%-ը, որից.

-շահաբաժինների գծով փաստացի մուտքերը կազմել են 150,920.6 հազար դրամ՝ կանխատեսված 114,108.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 132.2%:

-գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 924,903.2 հազար դրամ, ծրագրված 787,085.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 117.5%: Գույքի վարձակալության եկամուտների փաստացի աճը պայմանավորված է Երևան քաղաքի զբոսայգիներում, մասնավորապես Կենտրոն վարչական շրջանում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից զբաղեցրած տարածքների հաշվառման, գույքագրման, իրավական փաստաթղթերի հավաքագրման, ինչպես նաև վերջիններիս կողմից փաստացի զբաղեցրած հողամասերի սահմանների վերաճշտման և Երևան քաղաքի ավագանու որոշմամբ սահմանված պայմաններով պայմանագրերի վերանայման ու տեղեկատվական բազայի հստակեցման գործընթացով:

-պետության կողմից կրթության, ջրամատակարարման, մետրոպոլիտենի կառավարման, քաղաքային լուսավորության, կոշտ թափոնների կառավարման, սոցիալական և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների գործունեության կազմակերպման, պետական կազմակերպությունների աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման, ինչպես նաև քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ոլորտներում Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 38,316.576.5 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 36,774,697.7 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածի 105.8%-ը:

-օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարների գծով ճշտված բյուջեով նախատեսված 130,000.0 հազար դրամ ցուցանիշի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 144,581.0 հազար դրամ: Այս պարագայում կանխատեսվող ցուցանիշը հաշվարկվել էր նախորդ տարվա դիմումների վերլուծության հիման վրա, սակայն այն որպես այդպիսին կախված է ընթացիկ տարում նման ծառայության մատուցման փաստացի դիմումատուների քանակից:

-տեղական վճարների գծով փաստացի եկամուտները կազմել են՝ 3,240,517.2 հազար դրամ, նախատեսված 3,494,059.8 հազար դրամի նկատմամբ կամ նախատեսվածի 92.7%-ը, ինչը պայմանավորված է աղբահանության վճարների գծով կանխատեսված (ըստ մակերեսի) և փաստացի հավաքագրված ցուցանիշների տարբերությամբ:

-ինքնակամ կառույցների օրինականացման վճարների մասով փաստացի մուտքերը կազմել են 286,605.0 հազար դրամ՝ ծրագրված 250,000.0 հազար դրամի դիմաց, կամ նախատեսվածի 114.6%-ը,

-վարչական իրավախախտումներից փաստացի մուտքերը կազմել են 544,568.6 հազար դրամ, նախատեսված 398,000.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսվածից շուրջ 1.4 անգամ ավել,

-համայնքի գույքին պատճառված վնասների փոխհատուցումից մուտքերը կազմել են 3,902.9 հազար դրամ,

-օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտների գծով մուտքերը կազմել են 212,117.7 հազար դրամ՝ նախատեսված 254,650.0 հազար դրամի դիմաց:

Ծախսեր

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 78,481,116.5 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 78,269,754.1 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 100.2%-ը, որն ավել է 2015 թվականի փաստացի ծախսից 1,402,678.9 հազար դրամով կամ 1.8%-ով: Փաստացի կատարված ծախսերը եկամուտների տեսակարար կշռում կազմում են 101,4%: Ընդամենը փաստացի ծախսերից 76,050,996.8 հազար դրամը կամ 96.9%-ը ուղղվել են ընթացիկ ծախսերին (վարչական բյուջե), իսկ 2,430,119.7 հազար դրամը կամ 3.1%-ը՝ կապիտալ բնույթի զուտ ծախսերին (ֆոնդային բյուջե), ինչպես նաև 3,180,987.6 հազար դրամի ծախսեր իրականացվել են ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերի հաշվին:

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի ծախսերի ծավալներում գերակշիռ են սոցիալական բնագավառի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) ծախսերը, որոնց տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերի մեջ կազմում է 37.6%, տրանսպորտի բնագավառին (այդ թվում՝ ճանապարհային տրանսպորտի) վերաբերող ծախսերինը՝ 12.3%, շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված ծախսերինը՝ 9.7%:

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	6,319,108.4	5,788,254.7	91.60%
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	13,018,387.4	12,538,631.1	96.31%
Սուբսիդիաներ	33,844,134.4	33,655,005.7	99.44%
Դրամաշնորհներ	907,811.8	871,294.0	95.98%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	1,566,264.6	1,193,765.8	76.22%

Այլ ծախսեր	17,916,739.6	22,004,045.5	122.81%
Հիմնական միջոցներ	9,691,695.3	5,511,486.8	56.87%
Պաշարներ	100,000.0	99,620.4	99.62%
Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	-850,000.0	-487,954.1	57.41%
Չարտադրված ակտիվների իրացումից մուտքեր	-4,244,387.4	-2,693,034.0	63.45%
Ընդամենը	78,269,754.1	78,481,116.0	100.27%

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	8.607,121.3	7,623,841.8	88.6%
Պաշտպանություն	41,000.0	19,134.7	46.7%
Տնտեսական հարաբերություններ	9,566,440.4	7,861,252.8	82.2%
Շրջակա միջավայրի պաշտպանություն	7,778,516.1	7,609,709.8	97.8%
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	12,016,126.4	12,016,126.4	100.7%
Առողջապահություն	433,500.0	386,880.47	89.3%
Հանգիստ, մշակույթ և կրոն	3,123,101.9	2,857,125.3	91.5%
Կրթություն	28,019,621.1	27,307,781.1	97.5%
Սոցիալական պաշտպանություն	1,866,170.2	1,789,622.1	95.9%
Պահուստային ֆոնդեր	6,818,156.7	10,928,824.4	160.3%
Ընդամենը	78,269,754.1	78,481,116.5	100.3%

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի ծախսերի կատարողականի՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների և տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի վերլուծությամբ (բացառությամբ պատվիրակված լիազորությունների) նախատեսված ցուցանիշներից փաստացի կատարողականների շեղումը պայմանավորված է գրեթե բոլոր ծրագրերի գծով առկա տնտեսումներով:

Միաժամանակ՝ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի կատարողականն ըստ վարչական շրջանների և Երևանի քաղաքապետարանի (առանց վարչական շրջանների) հետևյալն է՝

հազար դրամ

h/h	Վարչական շրջանի անվանումը	2016 թվականի բյուջեով նախատեսված	2016 թվականին փաստացի ծախսը	2015 թվականին փաստացի ծախսը	Կատարման %-ը 2016 թ. նախատեսվածի նկատմամբ	Կատարման %-ը 2015 թ. փաստացի նկատմամբ
1.	Երևանի քաղաքապետարան (առանց վարչական շրջանների)	52,565,427.00	54,088,145.10	52,373,460.08	102.9%	103.1%
2.	Աջափնյակ	2,540,228.30	2,424,195.16	2,448,083.34	95.4%	99.0%
3.	Ավան	1,544,771.10	1,455,313.82	1,479,745.38	94.2%	98.3%
4.	Արաբկիր	2,872,434.90	2,694,839.54	2,778,491.21	93.8%	97.0%
5.	Դավթաշեն	1,172,571.10	1,102,966.09	1,154,469.47	94.1%	95.5%
6.	Էրեբունի	2,319,583.90	2,239,796.85	2,258,219.38	96.6%	99.2%
7.	Կենտրոն	3,718,098.10	3,510,393.06	3,538,720.88	94.4%	99.2%
8.	Մալաթիա-Սեբաստիա	2,971,811.20	2,812,855.6	2,814,718.08	94.7%	99.9%
9.	Նոր Նորք	3,006,327.20	2,896,943.39	2,865,477.11	96.4%	101.1%
10.	Նորք-Մարաշ	545,249.80	500,732.07	499,595.68	91.8%	100.2%
11.	Նուբարաշեն	350,850.30	313,635.9	317,613.07	89.4%	98.7%
12.	Շենգավիթ	2,849,617.90	2,642,457.19	2,706,160.17	92.7%	97.6%
13.	Քանաքեռ-Զեյթուն	1,312,559.70	1,798,842.76	1,843,683.61	137.0%	97.6%
	ԸՆԴԱՄԵՆԸ	77,769,530.50	78,481,116.53	77,078,437.46	100.9%	101.8%

Ստորև ներկայացվում են Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեով կատարված ծախսերի վերլուծությունը և հիմնավորումը՝ ըստ ծախսային ծրագրերի.

1. Կառավարման մարմնի պահպանում ծրագրով 2016 թվականի ճշտված բյուջեով նախատեսվել էր 8,023,165.3 հազար դրամ, որից փաստացի կատարվել է 7,211,876.1 հազար դրամ կամ նախատեսվածի 89.9%-ը, որը ավել է 2015 թվականի փաստացի կատարողական ցուցանիշից 70,252.5 հազար դրամով: Ծրագրի գծով 2016 թվականի խնայողությունը կազմել է 811,289.2 հազար դրամ: Այս ծախսերն իրականացվել են հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի (այդ թվում՝ Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին պահպանվող բյուջետային հիմնարկի՝ «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին (ներառյալ վարչական շրջաններին) վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները:

Նշված ծրագրով նախատեսված ծախսերում մեծ տեսակարար կշիռ է կազմում աշխատավարձի գծով ծախսերը՝ 4,695,172.6 հազար դրամ՝ նախատեսված 5,212,025.9 հազար դրամի դիմաց կամ 90.1%: Աշխատավարձի գծով ծախսերն իրականացվել են Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N 3-Ա որոշմամբ (30.04.15թ. N 322-Ա որոշման ճշտումով) սահմանված հաստիքացուցակի հիման վրա օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընդ որում հաստատված (ճշտված) հաստիքացուցակով նախատեսված 1998 միավոր հաստիքի դիմաց աշխատավարձի փաստացի վճարում իրականացվել է միջինը 1986 հաստիքի համար:

Երևանի քաղաքապետարանի աշխատողների պարգևատրման գծով ծախսերը կազմել են 660,826.8 հազար դրամ՝ նախատեսված 758,538.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 87.1%: Պարգևատրման ֆոնդի հաշվին պարգևատրվել են հիմնականում տարվա ընթացքում լրացուցիչ աշխատանք կատարող աշխատողները, ինչպես նաև տարեվերջին Երևանի քաղաքապետարանի գրեթե բոլոր աշխատողները (բացառությամբ տարվա ընթացքում նկատողություն ստացած աշխատողների)՝ մեկ ամսվա աշխատավարձի չափով:

Էներգետիկ ծառայությունների գծով ծախսերը կազմել են 254,388.5 հազար դրամ՝ նախատեսված 301,263.5 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 84.4%, որը ներառում է Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչական շենքերի էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը:

Կոմունալ ծառայությունները ներառում են վարչական շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև միջատազերծման ծառայությունների հետ կապված ծախսերը, որի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 15,517.3 հազար դրամ նախատեսված 16,605.5 հազար դրամի դիմաց:

Կապի ծառայությունների գծով ծախսերը կազմել են 186,701.6 հազար դրամ՝ նախատեսված 228,606.6 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 81.7% և ներառում են փոստային և սուրհանդակային ծառայությունների, քաղաքային հեռախոսակապի, բջջային կապի, ինտերնետային և օպտիկական կապուղու ծառայությունների համար տրամադրված գումարները: Ծախսերի նվազեցումը հիմնականում պայմանավորված է հեռախոսակապի ապահովման նոր օպերատորի առաջարկած սակագներով, ինչի արդյունքում 2016 թվականին կատարված ծախսերը պակաս են 2015 թվականին կատարված ծախսերից 42,459.1 հազար դրամով:

Ապահովագրական ծախսերը կազմել են 4,162.4 հազար դրամ՝ նախատեսված 5,320.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 78.2%, որն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական գործընթացն իրականացնելուն:

Գույքի և սարքավորումների վարձակալության գծով ծախսերը կազմել են 91,325.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100.0%, որը ավել է 2015 թվականի փաստացի ցուցանիշից 1,665.2 հազար դրամով: Այս գումարի շրջանակներում ապահովվել է քաղաքապետարանի թվով 18 ծառայողական ավտոմեքենաների վարձակալությունը, որը ներառում է նաև այդ ավտոմեքենաների ընթացիկ նորոգումը, վառելիքի ծախսը, վարորդի աշխատավարձը և այլն, ինչպես նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության իրականացման համար վարձակալված տարածքի վարձավճարի մի մասը:

Արտասահմանյան գործուղումների գծով ծախսերը կազմել են 28,319.2 հազար դրամ՝ նախատեսված 68,500.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 41.3% կամ խնայողությունը կազմել է 40,180.8 հազար դրամ: Այս ծրագրով 2016 թվականի փաստացի ծախսերը պակաս են 2015 թվականի համապատասխան ցուցանիշից 13,655.3 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում Երևանի ավագանու, քաղաքապետարանի և վարչական շրջանների թվով 37 պատվիրակություններ (111 անձ) գործուղվել են թվով 25 քաղաքներ, մասնակցություն են ունեցել 37 միջոցառումների: Երևանի քաղաքապետարանի կողմից 2016 թվականին իրականացված արտաքին նպատակային քաղաքականության արդյունքում պաշտոնական այցեր են կատարվել Ստեփանակերտ, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կազան, Ստավրոպոլ, Տալին, Չժեն Չժաու, Ուոումչի, Լիոն, Նիս, Կարրարա, Տոկիո, Դուբայ, Բոգոտա, Ստրասբուրգ, Թբիլիսի, Կիև, Ամստերդամ: Գործուղումների գծով բոլոր ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման օտարերկրյա պետություններ ուսման կամ ծառայության գործուղված Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողի և նրա ընտանիքի անդամների, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմին ծառայության մեկնող դիվանագետի և նրա ընտանիքի անդամների՝ Հայաստանի Հանրապետությունից օտարերկրյա պետություն մեկնելու կամ օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն վերադառնալու տրանսպորտային ծախսերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունում բնակելի տարածության վարձակալության համար դրամական փոխհատուցման կարգերն ու չափերը հաստատելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներով:

Վարչական ծառայությունների գծով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում գրքերի (փաստաթղթերի) կարման համար ծախսերը կազմել են 1,495.9 հազար դրամ՝ նախատեսված 3,185.1 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 46.9%, որը պակաս է 2015 թվականի փաստացի ցուցանիշից 1,883.6 հազար դրամով:

Համակարգչային ծառայությունների գծով ծախսերը կազմել են 36,943.0 հազար դրամ՝ նախատեսված 37,341.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 98.9%-ով, ինչը ներառում է քաղաքապետարանի գույքահարկի, հողի հարկի, տեղական տուրքերի, աղբահանության վճարների և հողի վարձակալության հաշվառման (բազայի), վճարումների ընդունման առցանց համակարգի և գանձապետական համակարգչային առկա ծրագրերի, ինչպես նաև վարչական շրջանների ՀԾ համակարգի սպասարկման ծառայությունները:

Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունների գծով ծախսերը կազմել են 4,314.3 հազար դրամ՝ նախատեսված 4,510.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 95.7%-ով, ինչը 4,555.2 հազար դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից: Նշված գումարի շրջանակներում իրականացվել է թվով 198 համայնքային ծառայողների ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վերապատրաստման գործընթացը:

Տեղեկատվական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 37,890.0 հազար դրամ՝ նախատեսված 40,332.1 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 94.0%-ով, ինչը ավել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից 697.6 հազար դրամով: Այս ծախսերը ներառում են պաշտոնական և գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրերի, բրոշյուրների տպագրության, թերթերի և ամսագրերի, տպագրական աշխատանքների (ներառյալ բլանկների) իրականացման, լրատվական ծառայությունների ձեռք բերման ծախսերը, իսկ աճը 2015 թվականի համեմատ պայմանավորված է փաստաթղթաշրջանառության ծավալների ավելացմամբ և բլանկների տպագրության ծավալներով:

Կառավարչական ծառայությունների գծով ծախսերը կազմել են 2,790.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 3,000.0 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 93.0%-ով, ինչի շրջանակներում իրականացվել է Երևանի քաղաքապետարանի 2015 թվականի բյուջեի անկախ աուդիտ անցկացնելու աուդիտորական մասնագիտացված կազմակերպության ծառայությունների ձեռք բերումը: Հարկ է նշել, որ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեով ի սկզբանե նախատեսվել էր 10,000.0 հազար դրամ, սակայն մրցույթի ընթացքում ծառայությունը ձեռք է բերվել շատ ավելի ցածր գնով:

Ներկայացուցչական ծախսերի գծով փաստացի կատարողականը կազմել է 128,217.8 հազար դրամ՝ նախատեսված 132,181.9 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 97.0%-ով, ինչի շրջանակներում ապահովվել է ավելի քան 30 գործընկեր քաղաքների պատվիրակությունների և հյուրերի ընդունելությունների և արարողակարգային բնույթի միջոցառումների (ներառյալ արարողական հուշանվերների, հյուրանոցային և տրանսպորտային ծախսերի, թարգմանչական ծառայությունների, հյուրասիրության, հանքային ջրի և այլն) հետ կապված ծախսերը, ինչպես նաև ապահովվել են Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջանների աշխատակազմերում առօրյա ներկայացուցչական ծախսերը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով ծախսերը ներառում են Երևանի քաղաքապետարանի վարչական շենքերի պահպանման ծախսերը, այդ թվում՝ մաքրման ծառայությունները (հավաքարարների աշխատավարձ), նյութերի ձեռք բերումը, ընթացիկ այլ աշխատանքները, ինչպես նաև վարչական շրջանների աշխատակազմերի գործառույթներով պայմանավորված օպերատիվ հաղորդակցման համար անհրաժեշտ ծառայությունները, որի գծով փաստացի կատարողականը կազմել է 80,377.2 հազար դրամ կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 99.6%-ով:

Մասնագիտական ծառայությունների գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է 9,123.1 հազար դրամ՝ նախատեսված 10,593.4 հազար դրամի դիմաց կամ նախատեսված ցուցանիշը կատարվել է 86.1%-ով, ինչը 1,103.5 հազար դրամով պակաս է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, իսկ մատուցված ծառայությունները ներառում են փաստաթղթերի արխիվացման, գազի, ավտոմատ հեռախոսակայանների սպասարկման, ինչպես նաև հնոցապահի ծառայությունները:

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման գծով փաստացի կատարողականը կազմել է 253,902.9 հազար դրամ՝ նախատեսված 276,153.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 91.9%, ինչը պակաս է 2015 թվականի փաստացի ցուցանիշից 3.4%-ով: Այս հոդվածով նախատեսված գումարների շրջանակներում իրականացվել են քաղաքապետարանի (ներառյալ՝ վարչական շրջանների) հաշվեկշռում հաշվառված ավտոմեքենաների պահպանման և նորոգման, գույքի, համակարգչային տեխնիկայի և շահագործվող այլ սարքավորումների ընթացիկ նորոգումն ու պահպանումը:

Գրասենյակային նյութեր և հագնուստ հոդվածով փաստացի իրականացվել է 60,864.0 հազար դրամի ծախս՝ նախատեսված 84,621.9 հազար դրամի դիմաց կամ կատարվել է 71.9%-ով, ինչը ավելին է 2015 թվականի փաստացի ցուցանիշից 5,871.2 հազար դրամով: Նշված հոդվածի շրջանակներում ձեռք են բերվել զուտ գրասենյակային նյութեր (թուղթ, գրիչ, արագակար, մատիտ, թղթապանակ, ռեզիստր և այլն), իսկ նախատեսված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած տնտեսումներով:

Տրանսպորտային նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 219,852.2 հազար դրամ՝ նախատեսված 247,854.4 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 88.7%, ինչը ներառում է վարչական շրջաններին սպասարկող ավտոմեքենաների վառելիքի, քսանյութի և անվադողերի ձեռք բերման ծախսերը, ինչպես նաև քաղաքապետարանի աշխատակազմի որոշ ստորաբաժանումների գործառույթային առանձնահատկություններով պայմանավորված անձնական ավտոմեքենաները ծառայողական նպատակներով օգտագործման համար տրված վառելիքի ծախսերը (հիմք՝ Երևանի քաղաքապետի 2016 թվականի ապրիլի -ի N 1111-Ա որոշում):

Կենցաղային և հանրային սննդի նյութերի գծով փաստացի ծախսը կազմել է 16,006.7 հազար դրամ՝ նախատեսված 22,825.9 հազար դրամի դիմաց, ինչը 154.3 հազար դրամով ավել է 2015 թվականի համապատասխան ցուցանիշից և 5,006.2 հազար դրամով պակաս է 2016 թվականի ճշտված ցուցանիշից, որն էլ պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով:

Հատուկ նպատակային այլ նյութերի գծով փաստացի կատարողականը կազմել է 6,722.4 հազար դրամ՝ նախատեսված 7,850.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 85.6%, ինչը 874.4 հազար դրամով ավել է 2015 թվականի նույն ցուցանիշից և ներառում է տոնական և հիշատակի օրերի, ինչպես նաև այլ միջոցառումների համար նախատեսված ծաղկեպսակների և ծաղկային կոմպոզիցիաների ձեռք բերումը:

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 270,959.1 հազար դրամ, նախատեսված (ճշտված) 270,959.1 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը

կազմել է 100.0%: Այն իրենից ներկայացնում է «Գերատեսչական շենքերի պահպանման և շահագործման» ՓԲԸ-ի պահպանման ծախսերը:

Այլ նպաստներ բյուջեից հոդվածով փաստացի կատարողականը կազմել է 38,519.8 հազար դրամ՝ նախատեսված 43,100.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի «Դրամական փոխհատուցում տրամադրելու և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի ապրիլի 5-ի N 629-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 25-Ա որոշմամբ սահմանված կարգով կատարված ծախսերի դիմաց փոխհատուցում է վճարվել Երևան քաղաքի ավագանու անդամներին, ինչպես նաև մեկ անձի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վճարվել է խեղման նպաստ:

Պարտադիր վճարների գծով փաստացի կատարողականը կազմել է 2,000.1 հազար դրամ՝ նախատեսված 3,157.5 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում նախատեսվել և իրականացվել է քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մեքենաների տեխնիկական զննման և տուրքերի վճարման ծախսերը:

Այլ ծախսերի հոդվածով նախատեսված (ճշտված) 8,170.3 հազար դրամի դիմաց ծախս չի կատարվել:

Տրանսպորտային սարքավորումների հոդվածով ավտոմեքենայի ձեռք բերման համար նախատեսվել էր 33,185.0 հազար դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 31,185.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 93.37%:

Վարչական սարքավորումների գծով փաստացի ծախսը կազմել է 74,299.1 հազար դրամ՝ նախատեսված 103,744.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 71.6%, ինչը 48,363.8 հազար դրամով պակաս է 2015 թվականի նույն ցուցանիշից: Այն ուղղվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում անհրաժեշտ գույքի ձեռք բերմանը, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի գույքի և տեխնիկայի (այդ թվում՝ համակարգչային) փոխարինմանը:

2. Վարչական օբյեկտների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 134,446.0 հազար դրամ՝ նախատեսված 184,794.3 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 72.8%: Նշված ծրագրի շրջանակներում իրականացվել են

Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջանների վարչական շենքերի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքներ:

3. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության գործունեության կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 90,520.5 հազար դրամ՝ նախատեսված 92,595.7 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 97.8%: Այս ծրագրով բոլոր ծախսերը իրականացվել են ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 4-ի N 88-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4. Նախագծային աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 77,791.5 հազար դրամ՝ նախատեսված 149,700.0 հազար դրամի դիմաց, ինչպես նաև 2015 թվականի փաստացի ցուցանիշից 7,156.6 հազար դրամով պակաս: Նշված գումարի շրջանակներում ձեռք են բերվել ինչպես Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեով, այնպես էլ Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեով նախատեսված որոշ կապիտալ ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերը:

5. Երևան քաղաքի գլխավոր հատակագծի ճշգրտում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 5,950.0 հազար դրամ՝ նախատեսված 21,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 28.3%, ինչի շրջանակներում նախորդ տարիների կատարված աշխատանքների վերլուծության հիման վրա կատարվել են Երևան քաղաքի գլխավոր հատակագծի պահանջներով պայմանավորված վերլուծական աշխատանքներ:

6. Գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,980.0 հազար դրամ՝ նախատեսված 40,000.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 49.9%, որն ուղղվել է Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի մնացած հատվածների գոտիավորման և կառուցապատման նախագծերի մշակման 1-ին փուլի աշխատանքներին:

7. Դիմումներ, հայցադիմումներ, դատարանի որոշումների և վճիռների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս սահմանված վճարներ և Գույքի նկատմամբ իրավունքների գրանցման, գնահատման և տեղեկատվության տրամադրման հետ կապված վճարումներ ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 83,277.7 հազար դրամ՝ նախատեսված 134,870.0 հազար դրամի դիմաց կամ

ընդհանուր կատարողականը կազմել է 61.8%: Ծրագրերի շրջանակներում իրականացվել են դատարան դիմելու պետական տուրքերի, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գրանցման և գնահատման հետ կապված ծախսերը:

8. Քաղաքացիական պաշտպանության աջակցություն և գորակոչի կազմակերպման աջակցություն ծրագրերով փաստացի ծախսը կազմել է 19,134.7 հազար դրամ՝ նախատեսված 42,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 45.6%, որոնց շրջանակներում վառելիքով, տրանսպորտային միջոցներով և գրասենյակային նյութերով աջակցություն է ցուցաբերվել Երևան քաղաքի տարածքային Ձինկոմիսարիատներին և քաղաքացիական պաշտպանության կառույցներին:

9. Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 70,362.4 հազար դրամ՝ նախատեսված 88,350.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 79.64%: Փաստացի կատարողական ցուցանիշի շեղումը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացում առաջացած խնայողություններով: Ծրագրի շրջանակներում ընդհանուր 2.2 կմ երկարությամբ ոռոգման ցանցեր են կառուցվել և անցկացվել Դեմիրճյան և Մամիկոնյաց փողոցներում, ինչպես նաև կառուցվել են 2 խորքային հորեր Կորյուն փողոցում և Ֆիզիկայի ինստիտուտի մոտ:

10. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ծրագրով փաստացի կատարողականը կազմել է 3,466,751.3 հազար դրամ՝ նախատեսված 3,715,600.0 հազար դրամի դիմաց կամ կատարողականը կազմել է 93.3%, ինչի շրջանակներում Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցներում, մայթերում և բակային տարածքներում իրականացվել են շուրջ 800 հազար քառակուսի մետր մակերեսով ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Իրականացվել են նաև փողոցների ճաքալցման աշխատանքներ:

11. Ասֆալտ-բետոնյա ծածկի հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 163,362.9 հազար դրամ՝ նախատեսված 150,000.0 հազար դրամի դիմաց, ինչը ավելին է 2015 թվականի համապատասխան ցուցանիշից 14,902.6 հազար դրամով: Նշված գումարի շրջանակներում իրականացվել են հողային պաստառով

ճանապարհների շուրջ 10 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերեսով տարածքի հիմնանորոգման աշխատանքներ:

12. Եզրաքարերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 33,701.4 հազար դրամ՝ նախատեսված 42,960.4 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 78.5%, որից 13,902.1 հազար դրամը թվով 5 վարչական շրջաններում եզրաքարերի ընթացիկ նորոգման, իսկ 19,799.3 հազար դրամը Երևան քաղաքի փողոցների հին եզրաքարերի փոխարինման համար՝ ընդհանուր 1,316 գծմ երկարությամբ:

13. Հենապատերի վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 51,703.5 հազար դրամ՝ նախատեսված 88,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 58.8%, որը պակաս է նախորդ տարվա փաստացի ցուցանիշից 15,960.5 հազար դրամով: Ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել են Կենտրոն վարչական շրջանում գտնվող թվով 3 վթարային հենապատեր և ընթացիկ վերանորոգվել է թվով 10 հենապատ:

14. Հետիոտն անցումների կառուցում և վերանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 4,060.11 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 56,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում հիմնանորոգվել է Նորք-Մարաշ վարչական շրջանում Նորքի 7 փողոցից Նորքի 5 փողոց տանող հետիոտն անցումը և վերանորոգվել է Երևանի քաղաքի Գարեգին Նժդեհ փողոցի հարակից տարածքում Ողջաբերդ գետի վրա հետիոտն կամուրջը:

15. Կամրջային կառուցվածքների վերականգնում և պահպանում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 89,967.6 հազար դրամ՝ նախատեսված 90,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում ֆինանսավորվել են Երևան քաղաքի թվով 4 կամուրջների, 3 էստակադանների, 2 հետիոտն վերգետնյա անցումների, 15 ուղեանցերի և ուղետարերի պահպանումը:

16. Հրազդանի կիրճի քարեկարգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 1,449.2 հազար դրամ՝ նախատեսված 2,000.0 հազար դրամի դիմաց, ինչի շրջանակներում իրականացվել են թափվող քարերից տարածքի մաքրման աշխատանքներ:

17. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 90,944.8 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված)

106,645.8 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 85.2%, որի շրջանակներում իրականացվել են շուրջ 3,825 քմ մայթերի սալիկապատման աշխատանքներ և Տիգրան Պետրոսյան փողոցի վերջնամասի տրանսպորտային հանգույցի կանոնակարգման և ճանապարհի լայնացման աշխատանքներ:

18. Փողոցների պահպանում և շահագործում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 49,842.3 հազար դրամ՝ նախատեսված 60,000.0 հազար դրամի դիմաց, որի շրջանակներում իրականացվել են Երևան քաղաքի որոշ փողոցների մետաղական ցանկապատերի և միջնապատերի վերանորոգման և ներկման աշխատանքներ:

19. Ավտոկայանատեղի կազմակերպման ծառայություն ծրագրով փաստացի ծախսը կազմել է 881,704.5 հազար դրամ և վճարումն իրականացվել է փաստացի հավաքագրված ավտոկայանատեղի տուրքի և տուգանքների գծով գումարներից պայմանագրով նախատեսված հարաբերակցությամբ:

20. Թեքահարթակների կառուցում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 30,864.9 հազար դրամ՝ նախատեսված 40,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 77.16%, որի շրջանակներում Երևան քաղաքի փողոցների խաչմերուկների մայթերի մուտքերում կառուցվել են թվով 275 թեքահարթակներ, ինչպես նաև 73 հատվածներում տեղադրվել են մայթերի ավարտի մասին զգուշացնող հատուկ գոգավորությամբ դեղին սալահատակներ՝ տեսողության խնդիրներ ունեցող քաղաքացիների համար:

21. Փողոցների, հրապարակների և այգիների կահավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 176,499.5 հազար դրամ՝ նախատեսված 195,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 90.5%, ինչի շրջանակներում ձեռք է բերվել և տեղադրվել տարբեր տիպի 750 նստարաններ, 610 աղբաման, թվով 100 անվճար հայտարարությունների տախտակներ, փողոցների թվով 15 նորառճ ուղեմիշեր, թվով 30 ծառաբների մետաղական ծածկույթ, պատրաստվել և տեղադրվել են թվով 700 դրոշակահենք, ինչպես նաև նորոգվել են թվով 126 վնասված նստարան ամբողջությամբ և 1055 նստարան մասնակի, 133 աղբաման ամբողջությամբ և 879 աղբաման մասնակի:

22. Ասիական բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի

հրացման միջոցառումներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 454,537.23 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 796,973.6 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 57.0%:

23. Վերելակների հիմնանորոգում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 95,216.9 հազար դրամ՝ նախատեսված 98,392.1 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 96.8%, որի շրջանակներում թվով 8 վարչական շրջաններում նորոգվել են թվով 587 վերելակ:

24. Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպում (պատվիրակված լիազորություններ) ծրագրով փաստացի ծախսը կազմել է 2,696,638.6 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

25. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայություններ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 623,370.9 հազար դրամ՝ նախատեսվածի չափով և հատկացվել է ՀՀ 2016 թվականի պետական բյուջեից որպես սուբվենցիա, ինչն ամբողջությամբ ուղղվել է «Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի ընթացիկ ծախսերի սուբսիդավորմանը:

26. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրով (պատվիրակված լիազորություններ) փաստացի ծախսը կազմել է 676,614.4 հազար դրամ՝ նախատեսված 704,928.5 հազար դրամի դիմաց կամ 95.9%:

27. Ջրոսաշրջության զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 19,945.0 հազար դրամ՝ նախատեսված 20,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.7%: Ծրագրի շրջանակներում տպագրվել և հյուրանոցներին, զբոսաշրջային ընկերություններին, թանգարաններին են տրամադրվել երկլեզու (ռուսերեն, անգլերեն) զբոսաշրջային քարտեզներ, իսկ իրադարձային զբոսաշրջության զարգացման նպատակով տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են արդեն ավանդական դարձած «Համով-հոտով Երևան» «Երևան SURUՋֆեստ» և «Երևանի գարեջրի» փառատոնները:

28. Դրոշների տեղադրում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 37,994.0 հազար դրամ՝ նախատեսված 49,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 77.5%, որի շրջանակներում ձեռք են բերվել և փոխվել թվով 6,300 դրոշ Երևան քաղաքի տարբեր վայրերում, մասնավորապես Երևան քաղաքի փողոցներում, Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցներում և մանկապարտեզներում, մշակութային կազմակերպություններում, սպորտ-դպրոցներում և շախմատի դպրոցներում: Օտարերկյա նախագահների այցերի հետ կապված դրոշակազարդարման համար օգտագործվել է թվով 130 հատ դրոշ:

29. Աջակցություն համայնքային կազմակերպություններին հուղարկավորությունների հետ կապված անվճար ծառայությունների մատուցման և գերեզմանատների պահպանման համար ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,591.0 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի հ. 1910-Ն որոշման հ.1 հավելվածի 16-րդ կետը, ուղղվել է գերեզմանատների վրա անվճար տեղադրվող մետաղական ցուցանակների ձեռք բերմանն ու տեղադրմանը, ինչպես նաև Կոմիտասի անվան պանթեոնի պահպանությանը:

30. Կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 149,926.2 հազար դրամ՝ նախատեսվածի չափով, ինչն ամբողջությամբ ուղղվել է քաղաքապետարանի ծրագրային ապահովում և ցանցային ղեկավարում իրականացնող «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի սուբսիդավորմանը:

31. Աջակցություն համայնքային և ոչ համայնքային կազմակերպությունների ծրագրերին ծրագրով փաստացի ծախսը կազմել է 455,073.4 հազար դրամ՝ նախատեսված 455,750.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 99.9%, որի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել թվով 99 կրթական, մշակութային և այլ կազմակերպությունների (ՀՈԱԿ, ՊՈԱԿ, հասարակական կազմակերպություն և այլն):

32. Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր ծրագրով փաստացի մուտքերը համայնքի սեփականություն հանդիսացող գույքի, այդ թվում՝ հողի իրացումից մուտքերի մասով կազմել են 3,180,987.6 հազար դրամ:

33. Տոնական ձևավորում ծրագրով փաստացի ծախսը կազմել է 23,000.0 հազար դրամ՝ նախատեսված 40,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 57.5%: Ֆինանսական միջոցները հատկացվել են տոնական օրերին Երևան քաղաքը՝ ներառյալ բոլոր վարչական շրջանները պատշաճ ձևավորելու, այդ թվում՝ տոնական դեկորատիվ առարկաներ, լույսեր և այլ զարդարանքներ ձեռք բերելու համար:

34. Հասցեավորման աշխատանքներ ծրագրով փաստացի ծախսը կազմել է 128,300.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 130,000.0 հազար դրամի դիմաց կամ ընդհանուր կատարողականը կազմել է 98.7%, որն ամբողջությամբ ուղղվել է Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N 224-Ն որոշման համաձայն հասցեավորման ծառայություններ ձեռք բերմանը:

